«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Աշակերտների մոտ շարադրություն գրելու մոտիվացիայի առաջացումը*

ԱՌԱՐԿԱ՝ *Հայոց լեզու*

ՀԵՂԻՆԱԿ՝ *Սահակյան Մարիյա Դերենիկի*

ՄԱՐԶ՝ *Կոտայք*

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ *Սոլակի միջնակարգ դպրոց*

Բովանդակություն

Ներածություն 2

Շարադրություն. տեսակները և անցկացումը 4

Հավելված 12

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Աշակերտի գիտելիքներին մի փոքր կայծ տալու համար ուսուցիչը իր մեջ պետք է լույսի մի ամբողջ ծով կուտակի:

Վ. Սուխոմլինսկի

Թեմայի արդիականություն: Շարադրությունների նպատակն է արդի 12-ամյա միջնակարգ կրթության շրջանակներում ապահովել հասարակության մեջ գրական հայերենով անկաշկանդ ու նպատակահարմար հաղորդակցվելու, սեփական մտքերը բանավոր և գրավոր շարադրելու, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խոսքային գործունեություն իրականացնելու արդյունավետ ուսուցման դերը, ինչպես նաև բացահայտել ու զարգացնել աշակերտի ստեղծագործական ունակություններն ու երևակայական մտածողությունը:

Այսօրվա դպրոցում էական շատ փոփոխություններ են կատարվել: Փոխված են միջնակարգ դպրոցում հայոց լեզվի և գրականության դասավանդման հայեցակարգը, ուսումնական ընդհանուր նպատակները, առարկաների բովանդակային ընդգրկումը, ծրագրերն ու ժամաքանակները: Փոխվել են նաև աշակերտների գիտելիքները ստուգելու ձևերը: Ուսուցիչները մեծ մասամբ կիրառում են թեստային և հարցարանային աշխատանքներ՝ հետին պլան մղելով փոխադրությունն ու շարադրությունը: Իսկ դա հանգեցրել է նրան, որ այսօր հանրակրթական դպրոցների շատ աշակերտներ չեն ուզում կամ դժվարանում են շարադրություններ գրել, իրենց մտքերը, դատողությունները, զգացածը, տեսածն ու լսածը գրագետ շարադրել կամ պատմել: Դա բացատրվում է նաև նրանով, որ վերջին շրջանում ավարտական և բուհերի ընդունելության քննությունները անցկացվում են թեստերով, որոնք ստեղծագործական աշխատանք չեն պահանջում, չեն նպաստում աշակերտների պատկերավոր, գեղեցիկ, արտահայտիչ խոսքի զարգացմանը: Աշակերտները գրում են ուղղագրական, կետադրական, ոճական սխալներով: Նրանք վարժվել են հեշտ ճանապարհով գնահատական ստանալուն և չեն ուզում մտածել: Ասվածից չպետք է եզրակացնել, որ ես դեմ եմ թեստային առաջադրանքներին կամ դրանք չեմ կիրառում: Ուսումնական տարվա ընթացքում կիրառում եմ գրավոր աշխատանքի տարբեր տեսակներ՝ արտագրությունից ու թելադրությունից մինչև փոխադրություններ ու շարադրություններ, համառոտ զեկուցումներ ու ռեֆերատներ՝ ամեն դասարանի համար մշակելով առանձին համակարգ: Սակայն սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման բազմաթիվ միջոցներից առանձնացնում եմ ստեղծագործական գրավոր աշխատանքները՝

հիմնականում աչքի առաջ ունենալով շարադրությունները: Համոզված պնդում եմ՝ դրանք իրենց ենթատեսակներով սովորողների ստեղծագործական ունակություններն ու բառապաշարը զարգացնելու, քերականական նյութը գործնական միջոցներով յուրացնելու լայն հնարավորություններ են տալիս, նպաստում գրավոր ու բանավոր խոսքի զարգացմանը, նրանց գեղագիտական ճաշակի բարձրացմանը: Դժվարությունը միայն այն է, որ շարադրություններին հատկացվում է մեկ դասաժամ:

Իմ հետազոտական աշխատանքի ***նպատակն է*** զարգացնել աշակերտների՝ շարադրություններ գրելու հմտությունները, բարձրացնել մոտիվացիան, զարգացնել ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը: Դրա համար անհրաժեշտ է լուծել մեր առջև ծառացող մի շարք ***խնդիրներ.***

1.Վեր հանել այն դժվարությունները, որոնց աշակերտը հանդիպում է շարադրություն գրելիս:

2.Մշակել քայլերի և խորհուրդների բազա՝ դրանք հաղթահարելու և աշակերտների ստեղծագործական կարողությունները բացահայտելու և զարգացնելու ուղղությամբ:

Ստորև կներկայացնեմ շարադրության տեսակները և դրանց անցկացման մի քանի կանոններ ու օրենքներ ինչպես ուրիշների, այնպես էլ իմ փորձից:

Շարադրություն. տեսակները և անցկացումը

Ստեղծագործական շարադրությունները կարևոր դեր են խաղում աշակերտների գրավոր ու բանավոր խոսքի զարգացման, նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման, խոսքի մշակույթի կատարելագործման գործում:

Դպրոցականներին օգնելու և կողմնորոշելու, նրանց ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար թեև հրատարակվել են շարադրությունների մի քանի ժողովածուներ, բայց դրանք արմատապես և կտրուկ չեն փոխում վիճակը. աշակերտները շարունակում են դժվարանալ :

Ամենից առաջ նշենք, որ ստեղծագործական շարադրություններն ըստ բնույթի լինում են երեք տեսակ՝ *պատմողական, նկարագրական և դատողական:*

Ամենահեշտը և տարածվածը ***պատմողականն շարադրությունն*** է, որի մեջ պատմվում է որևէ դեպքի, երևույթի մասին, որն ունենում է հաղորդման սկիզբ, զարգացում և ավարտ: Աշակերտը պետք է վարժվի անկաշկանդ գրելու իր հետ կատարվածի մասին, պարզ, մատչելի ու հստակ շարադրի իր տեսածն ու լսածը, զգացածն ու ապրածը : Այսպիսի շարադրություն գրելուն նախապատրաստվելու համար կարելի է լայնորեն օգտագործել ինչպես դասագրքերի, այնպես էլ արտադասարանական ընթերցանության նյութերի հնարավորությունները : Սովորողները նախ պետք է պատմեն, ապա նոր միայն փորձեն շարադրել իրենց հեր կապված հերաքրքրական դեպքի մասին:

Նկարագրական շարադրությունն ունի այլ կառուցվածք. սկզբում հաղորդվում են նկարագրվող երևույթից կամ առարկայից ստացած տպավորությունները, ապա ցույց են տրվում դրանց ամենաբնորոշ ու էական հատկանիշները, իսկ վերջում տրվում է գնահատականը կամ եզրակացությունը: Նկարագրական շարադրություն գրելու համար աշակերտները պետք է ուշադիր ու մանրամասն դիտեն իրենց շրջապատը, առարկաներն ու երևույթները, նկատեն բնության փոփոխությունները: Այդ ամենը գեղեցիկ ու արտահայտիչ վերարտադրելու, նկարագրելու համար սովորողները պետք է օգտագործեն համապատասխան մակդիրներ, զանազան համեմատություններ ու փոխաբերություններ:

Նկարագրական-պատմողական շարադրության մի տեսակ է *նկարի շուրջ տրվող աշխատանքը*, որը մեծապես նպաստում է նկար կարդալուն, արժևորելուն նկարի մեջ պատկերված երևույթները:

Հետաքրքրական է նաև դիտած *կինոնկարի վերաբերյալ շարադրություն* գրելը, որը մեր դպրոցներում, ցավոք, լայն տարածում չի գտել:

Դատողական շարադրությունը կառուցվածքով տարբերվում է առաջիններից: Բաղկացած պետք է լինի հետևյալ մասերից՝ ընդհանուր վիճակը բացահայտող մաս՝ դրույթ, ապացույցներ պարունակող մաս և եզրակացություններ:Դատողական շարադրություն գրելը համեմետաբար դժվար է և տրվում է բարձր դասարաններում(օրինակ՝ հայրենասիրության, հերոսության, իսկական մարդ կոչվելու, ամենակարող լինելու, հացի պաշտամունքի և այլնի մասին): Այսպիսի շարադրություն գրողը պետք է փաստերով ապացուցի իր առաջ քաշած դրույթի ճշմարտացիությունը: Դատողական շարադրություն գրողը պետք է մտքում ունենա շարադրանքի պլանը, հստակ պատկերացնի նրա *սկիզբը, ընթացքը և ավարտը* , որոնք շարադրանքի կարևոր փուլերն են: Դատողական շարադրություններ կարելի է գրել սովորողների ձգտումների, երազանքների, մասնագիտության ընտրության, ինչպես նաև հայրենասիրության, հերոսության, աշխատասիրության, բարեկամության շուրջ:

Նախքան շարադրությունը ուսուցիչը պետք է նմանօրինակ շարադրություններ կարդա, ցույց տա նրբություններն ու պահանջները: Այդ բանին մեծապես կարող են օգնել նաև տրված սկիզբով կամ վերջով գրվող շարադրությունները: Օրինակ՝ ուսուցիչը կարող է տալ շարադրության *սկիզբը* և պահանջել, որ աշակերտներից յուրաքանչյուրը յուրովի շարունակի այդ միտքը: Այս աշխատանքը նման է ստեղծագործական փոխադրությանը:[1]

Մինչև շարադրություն գրել հանձնարարելը ուսուցիչը պետք է հանգամանորեն բացատրի, պարզաբանի դրա հետ կապված բոլոր մանրամասնությունները և նրբությունները,նշի այն նյութերը , աղբյուրները , որոնց օգտագործմամբ հեշտ կլինի գրել շարադրությունը, տա շարադրության մոտավոր ուրվագիծը , պլանը կամ հանգուցային հարցերը: Ցանկալի կլինի , որ ուսուցիչը սկզբնական շրջանում շարադրություններ հանձնարարելիս նմանատիպ շարադրություն կարդա կամ հիշեցնի , ծանոթացնի համապատասխան գրական ընթերցանության նյութերին: Այսպես, օրինակ, երբ հայտարարվեց «Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի » խորագրով շարադրությունների մրցույթ, աշակերտներին հանձնարարեցի գտնել ասույթներ խաղաղության և պատերազմի մասին, ապա անցկացվեց քննարկում,թե ինչպես կարելի է պատերազմել, ինչ «զենք» կօգտագործեն, ինչը կփոխեն: Կատարված աշխատանքները տվեցին իրենց արդյունքը. մրցույթին ներկայացված շարադրությունը արժանացավ մրցանակի.

[1] Գայանե Օհանյան ՝Ստեղծագործական շարադրությունների ժողովածու՝Երևան-2005

Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի

Թե հարցնեին՝ ինչ եմ ուզում

Ես ինձ համար ու աշխարհի,

Ես կասեի. «Ես ինձ համար ու աշխարհի

Խաղաղություն եմ ուզում»:

Ես խաղաղություն եմ ուզում: Ուզում եմ ապրել ու արարել, ուզում եմ արթնանալ արևի չարաճճի շողից, շնչել վաղորդայնի ծաղկաբույր օդը և հասկանալ, որ իրականացել են մեր մեծերի բերանից հնչող բարեմաղթանքները՝ թող աշխարհում խաղաղություն լինի, թող խաղաղ լինեն հողն ու մարդկանց սրտերը: Երազում եմ հոգու խաղաղության մասին, որ հանգիստ քուն կբերի մարդկանց աչքերին, արդար ու անկեղծ ժպիտ կդրոշմի նրանց շուրթերին...Երազում եմ ու պատրաստ եմ...

... Շաչում են արկերը, իրար են զարկվում զենքեր...

Ես կռվում եմ, պատերազմում , բայց կռվում եմ մարդկային կարծրացած հոգեբանության դեմ, կռվում եմ, որ մարդկանց մեջ «իմ» ու «քոնը» չլինի: Ես պատրաստ եմ արյան գնով ձեռք բերելու ազատություն: Ես ազատության մարտիկն եմ ու խաղաղության դեսպանը:

Պատերազմում եմ, որ պատերազմ չլինի: Պատերազմում եմ, որ խաղաղություն հաստատեմ:

Ես «զենք» եմ ուզում ստեղծել, նորօրյա մի զենք, որով պատերազմելիս արյուն չթափվի, չորբանա ոչ մի մանուկ, չլինեն որդեկորույս մայրեր: Այդ ժամանակ ես կհամոզվեմ, որ զենքը խաղաղություն է ընծայում, երջանկություն է բերում, ու մարդիկ ապրում են խաղաղ հարկի տակ:

Ուրեմն , առա՜ջ...

Ես խաղաղություն եմ ուզում...

Ես պատրաստ եմ պատերազմի... Ես խաղաղության մարտիկ եմ հիմա ու պատրաստ եմ նորովի արարելու այդ «խաղաղություն – զենքը» , որն ի վերուստ Արարչի կողմից տրված է ադամորդուն: Նրա անունն է «ժպիտ», «Ծիծաղ» , «Արև» ու «Բարև»:

Ուրեմն, եկեք սեղմենք մեկմեկու ձեռք, ժպտանք ու ասենք՝բարև՜...

Շարադրության մի տեսակն էլ ստեղծվում է տրված բառերով ու բառակապակցություններով: Ուսուցիչը նախօրոք թելադրում է տվյալ շարադրության նյութին առնչվող 12-15 բառ ու բառակապակցություն և պահանջում գրել շարադրություն:

Կա շարադրության տեսակ քերականական առաջադրանքով.ասենք՝գրել «Անտառում» վերնագրով շարադրություն՝ գործածելով գոյականական անդամի լրացումներ:

Վերջերս շատ եմ կիրառում ուղղագրական բառերի օգտագործմամբ ստեղծագործական շարադրությունը:Ասենք ,օրինակ, հանձնարարում եմ գրել «էքսկուրսիա» վերնագրով շարադրություն՝ օգտագործելով է-ե-ի ուղղագրությանը վերաբերող բառեր:

10-12-րդ դասարաններում կիրառելի է նաև նամակի ձևով գրվող շարադրությունը, ինչը հնարավորություն է տալիս աշակերտին ամփոփ ներկայացնելու, վերլուծելու գրողի ստեղծագործությունը, արտահայտելու սեփական հույզերն ու զգացմունքները/«Նամակ Մեսրոպ Մաշտոցին»,«Նամակ Վահան Տերյանին», «Նամակ զինվորին», « Նամակ….»/: (Աշակերտների շարադրություններից պատառիկներ կներկայացնեմ «Հավելված»-ում):

5-6-րդ դասարաններում կարելի է հանձնարարել շարադրություններ գրել մայրիկի, տատիկի, առաջին ուսուցչուհու , տարվա եղանակների մասին, իսկ ավագ դպրոցի աշակերտներին՝ իրենց երազանքների, ապագայի, ընկերասիրության, հայրենասիրության, սիրո, երջանկության վերաբերյալ իրենց պատկերացումների մասին:

Ստեղծագործական շարադրություն գրելու համար անհրաժեշտ է մտքում ընդհանուր գծերով ձևավորել ասելիքը՝ ուրվագծելով սկիզբը, հիմնամասը և ավարտը: Կարելի է նաև նշումներով համակարգել մտածածը: Այնուհետև դանդաղ, մտածելով ու պատկերացնելով շարադրվում է ասելիքը: Շարադրելուց որոշ ժամանակ անց պետք է ընթերցել գրվածը՝ արդեն խմբագրական մոտեցմամբ: Անհրաժեշտ է ուշադիր լինել, որ շարադրանքում չլինեն բառային անհարկի կրկնություններ կամ պարզապես ավելորդ բառեր, անհաջող ձևակերպումներ, ոչ ճիշտ բնորոշումներ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանակային, պատճառահետևանքային կապերին, տրամաբանական համաչափ ընթացքին, որպեսզի շարադրանքում չլինեն անհամապատասխանություններ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև քերականական ժամանակների համապատասխանությանը, շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին, ուղղագրությանն ու կետադրությանը: Չափից դուրս երկար նախադասությունները պետք է կրճատել կամ վերջակետերով բաժանել իմաստային ինքնուրույնություն ունեցող հատվածների: Կարելի է որոնել ու գտնել թեմային համահունչ ստեղծագործություններ կամ թևավոր խոսքեր և

մեջբերումներ կատարել, սակայն դա լավ շարադրություն գրելու պարտադիր պայման չէ: Հատկապես հարկ չկա մի քանի ծավալուն մեջբերումներ կատարելու տարբեր բանաստեղծություններից, որոնք անընդհատ ընդմիջում են շարադրանքը և ընդգծում շարադրություն գրողի ասելիքի աղքատությունը: Կարելի է ընտրել մեկ դիպուկ բնաբան, որը կարող է լինել առած կամ ասացվածք, թևավոր խոսք, բանաստեղծության կամ արձակ ստեղծագործության տող: Եթե ժամանակ կա, շարադրություն գրողը պետք է իր գրածն ընթերցի գրելուց մի քանի օր հետո: Այդ դեպքում սեփական սխալները շուտ են նկատվում, միանգամից աչքի են զարնում այնպիսի թերություններ, որոնք շարադրելուց անմիջապես հետո կարդալիս զգալի չէին:

Շարադրության առանձին տեսակ է ***վերլուծական շարադրությունը***: Վերլուծական շարադրությունները գրվում են որևէ գրողի ստեղծագործության կամ ստեղծագործությունների վերաբերյալ: Կարող են լինել նաև համեմատական բնույթի շարադրություններ, որոնցում զուգադրվում ու վերլուծվում են տարբեր գրողների (կամ միևնույն գրողի) այնպիսի ստեղծագործություններ, որոնք գաղափարական ընդհանրություններ ունեն (օրինակ՝ երկուսում էլ ներկայացված է հայրենիքի թեման): Ավելի հաճախ շարադրությունները նվիրված են լինում ոչ թե ամբողջ ստեղծագործության վերլուծությանը, այլ որևէ կոնկրետ հարցի քննությանը (օրինակ՝ գլխավոր կերպարի վերլուծությանը): Այսպես՝ հայ նշանավոր արձակագիր Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ կարող են գրվել վերլուծական տարբեր շարադրություններ՝ «Գևորգ Մարզպետունու կերպարը», «Պատմականությունը Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում», «Մուրացանի աշխարհայացքի դրսևորումը «Գևորգ Մարզպետունի» վեպում» և այլն: Վերլուծական շարադրության նյութն առաջին հերթին գրական այն երկն է, որի վերաբերյալ պետք է գրվի շարադրությունը, սակայն անհրաժեշտ է նաև այլ նյութերի իմացություն: Շարադրություն գրողը պետք է ծանոթ լինի նաև տվյալ հեղինակի ուրիշ գործերի, պատկերացում ունենա այն ժամանակաշրջանի մասին, որի ընթացքում ապրել և ստեղծագործել է հեղինակը, իմանա գրական այն ուղղության առանձնահատկությունները, որի ներկայացուցիչն է հեղինակը (ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ և այլն):

Վերլուծական շարադրությունը գրվում է որոշակի սկզբունքներով, որոնց պահպանումը նպաստում է շարադրանքի իմաստային ամբողջականությանը: Շարադրություն գրողը պետք է կազմի շարադրանքի պլան: Պլանում ներկայացված հարցադրումների պատասխաններով էլ ընդհանուր առմամբ ձևավորվում է ամբողջ տեքստը:
ա) Նախ անհրաժեշտ է ներկայացնել որոշ տեղեկություններ այն մասին, թե որ

ժամանակաշրջանում է ապրել ու ստեղծագործել վերլուծվող ստեղծագործության հեղինակը, գրական որ ուղղության հետևորդ է եղել:

բ) Նշել տվյալ հեղինակի առավել հայտնի ստեղծագործություններից մի քանիսը. ցանկալի է, որ դա կատարվի թեմատիկ բաժանումով, այսինքն՝ խմբավորված նշվեն հայրենասիրական, խոհափիլիսոփայական, սիրային և մյուս թեմաներով գրված գործերը: գ) Այնուհետև անդրադառնալ վերլուծվող երկի ստեղծման ժամանակաշրջանին (օրինակ՝ գրվել է Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, Հայրենական մեծ պատերազմի տարիներին և այլն): Եթե ստեղծման ժամանակը էական դեր է ունեցել, ապա պետք է նշել նաև, թե այն ինչ ազդեցություն է թողել գրական տվյալ երկի վրա:

դ) Սրանից հետո խոսվում է այն մասին, թե ինչ բովանդակություն ունի վերլուծվող երկը, և շատ համառոտ ներկայացվում է սյուժեն:

ե) Սրա հիման վրա էլ վերլուծաբար ներկայացվում են ստեղծագործության գլխավոր գաղափարը, հեղինակի առաջ քաշած խնդիրները, դրանց տրվող լուծումները:

զ) Այս վերլուծությունից հետո ներկայացվում են տվյալ ստեղծագործության մեջ գործածված գեղարվեստական միջոցները (կերպարներ և գործողություններ, պատկերավորման միջոցներ և այլն):

է) Վերջում շարադրության հեղինակն ամփոփում է ասելիքը, գնահատում վերլուծվող երկը, կատարում եզրահանգումներ: Անշուշտ, պլանը չպետք է կաղապարի շարադրություն գրողին. վերլուծական շարադրությունը թեև գիտական, բայց նաև ստեղծագործական աշխատանք է, և գրելու ընթացքում միշտ էլ հնարավոր են տարբեր շեղումներ՝ սկզբում նախատեսված պլանի հարցադրումներից: Պլանը միայն ընդհանուր կառուցվածքային նշանակություն ունի:

Շարադրությունը չպետք է սկսել կաղապարված ներածականներով, որոնք տարածված ու ծամծմված են: Պետք է խուսափել ճոռոմ ու վերամբարձ բնորոշումներից, չափից շատ մակդիրների գործածումից, անհարկի ու կեղծ հուզականությունից: Պետք է խուսափել նաև ավելորդ բառեր գործածելուց: Անհրաժեշտ է վերլուծել, այլ ոչ թե վերապատմել ստեղծագործությունը: Մանավանդ չպետք է կատարել շատ և ծավալուն մեջբերումներ: Չափից շատ մեջբերումները սեփական ասելիքի բացակայության ապացույցն են: Նախադասությունները, հատկապես բարդ նախադասությունները պետք է կազմել հետևողականորեն և սկսած միտքը հասցնել ավարտին:

Անհրաժեշտ է գործածել այնպիսի բառեր, որոնց իմաստները գիտեք. այլապես գրվածքը կարող է անիմաստ, նույնիսկ ծիծաղելի ստացվել: Կարևոր և պարտադիր է ուղղագրական ու կետադրական կանոնների իմացությունը: Թեկուզ գեղեցիկ շարադրված, բայց ուղղագրական և կետադրական սխալներով լի շարադրանքը լավ տպավորություն չի թողնի: Պետք է հիշել, որ շարադրությունը պետք է առավելագույն տեղեկություններ պարունակի թեմայի վերաբերյալ: Սակայն հնարավոր չէ անդրադառնալ տվյալ թեմայի բոլոր կողմերին, դրա համար անհրաժեշտ է ընտրել դրանցից մեկը, քննարկել և փորձել գտնել հնարավորինս շատ հիմնավորումներ:

Շարադրությունները,ինչպես և փոխադրությունները, լինում են ուսուցողական /ընթացիկ/ և ստուգողական /թեմատիկ/: Շարադրությունը պիտի գրվի դասարանում՝ ուսուցչի և աշակերտների համատեղ և մանրակրկիտ աշխատանքից հետո: Մտքերը գրավոր շարադրելը դժվար գործ է , և սրան աշակերտին պիտի վարժեցնել: Միայն վերնագիր տալու և տանը գրելու հանձնարարությունը դրան չվարժված աշակերտին ստիպում է դիմել մեծահասակների օգնությանը, որն ավարտվում է նրանով, որ մեկ ուրիշն է գրում նրա փոխարեն կամ, որ ավելի վատ է,վերցնում է համացանցից:

Ուսուցողական շարադրությունը կարելի է գրել ըստ պլանի, ըստ տրված պարզ նախադասությունների ու բառերի, գրական երկից սովորած պատկերավոր արտահայտությունների: 5-6- րդ դասարաններում ստուգողական բնույթի շարադրանքներ տալը, իմ կարծիքով, նպատակահարմար չէ:

Եթե ուսուցիչը դասարանը նոր է ընդունել, և աշակերտները դեռ վարժված չեն իրենց մտքերը շարադրելուն, ապա աշակերտներին պետք է նախապատրաստել: Դրա լավագույն ձևը նախորդ դասաժամերին տրվող 3-5 րոպե տևողությամբ շարադրանքներն են, որոնք միավորային գնահատման չեն ենթարկվում: Փորձը ցույց է տալիս, որ երբ շարադրությունները չեն գնահատվում, աշակերտներն ավելի ազատ ու անկեղծ են լինում, ուստի սկզբնական շրջանում կարելի է չգնահատել, մինչև աշակերտը կվարժվի, կսովորի մտքերն արտահայտել, կճանաչի սեփական հնարավորությունները և կբացահայտի իր մեջ ստեղծագործ անհատին:

Դժվարությամբ ընկալող սովորողին կարելի է առաջարկել, որ նախ մտովի պատկերացնի թեման այնպես, կարծես կինոնկար է դիտում, հետո նոր մտքում պատկերածը շարադրի բառերով: Կարելի է նաև թուղթ և գունավոր մատիտներ տալ և առաջարկել նկարել գլխում ծնված պատկերները, ապա նկարածը պատմել բառերով:

Ամենից դժվարը շարադրանքի սկիզբը գտնելն է : Օգնելու նպատակով կարելի է մի քանի աշակերտի կարդալ տալ իրենց գրածի սկիզբը, կամ էլ այդ աշակերտի հետ մի քիչ զրուցել, մինչև որ նա գտնի իր շարադրանքի առաջին նախադասությունը: Իմ աշակերտները ոգևորությամբ են գրում հատկապես այն ժամանակ, երբ շարադրանքի թեման հանձնարարելուց հետո ինքս էլ եմ գրում նրանց հետ, ապա կարդում ու քննարկում ենք ոչ միայն իրենց, այլև իմ գրածը:

Կարևոր է նաև, որ հանձնարարվելիք շարադրության նյութը լինի սրտամոտ ու հարազատ, համապատասխան տվյալ տարիքին: Պետք է տրվեն այնպիսի ստեղծագործական շարադրություններ, որ աշակերտը կարողանա հիմնավորված եզրահանգումներ անել, պատկերավոր ու գեղեցիկ նկարագրել իր տեսածն ու զգացածը: Աշակերտները հատկապես լավ են գրում այն շարադրությունները, որոնք այս կամ այն չափով առնչվում են իրենց հույզերին, ապրումներին, տրամադրությանը: Այսպես, երբ 11-րդ դասարանում «Ճիտին պարտքը» նովելն անցնելիս հանձնարարեցի գրել 10ր շարադրանք նովելից ստացած տպավորության, օրվա տրամադրության մասին, աշակերտուհիներիցս մեկը գրել էր «Ճամպրուկային տրամադրություն» վերնագրով էսսե, որն այս տարի «Երիտասարդ ստեղծագործող հանրապետական ուսանողական մրցույթ-2021» մրցույթում արժանացավ մրցանակի(շարադրությունը `«Հավելված» գլխում):

Շարադրությունը պետք է ամբողջական լինի, նկարագրվող երևույթների մեջ փոխադարձ և ներքին տրամաբանական կապ պիտի լինի: Շատ կարևոր է ստեղծագործական շարադրությունների ստուգումն ու վերլուծությունը դասարանում: Ուսուցիչը պետք է ոչ միայն ուղղագրական ու կետադրական սխալները ցույց տա, այլև ոճական ու մտքի սխալները: Ուսուցիչը պետք է նշի յուրաքանչյուր շարադրության ուժեղ և թույլ կողմերը, դասարանում կարդա լավագույն շարադրությունները:

Հավելված

Պատառիկներ աշակերտների շարադրություններից

Ճամպրուկային տրամադրություն

Մենք տրամադրությունը վերագրում ենք երկրագնդիս վրա բանականությամբ օժտված միակ էակին՝ մարդուն: Բայց տրամադրության մեխանիկան այլ բան է թելադրում: Մեզ շրջապատող ամեն բան ենթարկվում է կյանքի տրամադրությանը, շնչավորից անշունչ, կենդանիից անկենդան հպատակվում են այդ տրամադրությանը՝ անկախ իրենց ցանկությունից ու ակնկալիքներից: Սա նույնն է, ինչ ֆիզիկայի օրենքների դեպքում: Ֆիզիկայում գոյություն ունեցող ուժերը անմիջականորեն ազդում են մարդկանց, իրերի, մոլորակների և ընդհանրապես այն ամենի վրա, ինչի վրա հնարավոր է ազդել: Տրամադրության մեխանիկայում ևս նույն տրամաբանությունն է գործում: Այս պարագայում ամեն ինչի վրա ազդող տրամադրությունը կյանքի ճամպրուկային տրամադրությունն է: Այս տրամադրությունը ամենաստաբիլն է, ամենաառկան, ամենագոն: Եթե փիլիսոփայության մեջ լուցկու լույսը կրակի մի դրսևորում է, ապա մեզ հայտնի մնացյալ բոլոր տրամադրությունները ճամպրուկային տրամադրության դրսևորումներ են: Այն ինչ-որ չափով ընդհանրություններ ունի անցողիկության հետ, բայց անցողիկ են այն հայացքները, որոնց ամեն անգամ բախվում ենք փողոցում կամ լուսացույցի կանաչ լույսին սպասելիս դիմացի մայթին կանգնած մի մոլորյալի հայացքին ենք հպվում: Տրամադրությունը ակնթարթ չէ, շոշափելի է և շոշափելի չէ, տարածական է և ոչ: Տրամադրությունը ակնթարթի պես ոչ թե մի, այլ գոնե մի քանի վայրկյանանոց գոյություն ունի: Եվ եթե ակնթարթը անբացատրելի ու աննկարագրելի է, ապա ճամպրուկային տրամադրությունը ինչ-որ առումով օրինաչափ է, ըմբռնելի և գուցե նաև ուսուցանելի է, ո՞վ գիտե… Այնքանով է ուսուցանելի, որ փոքր երեխային կարելի է բացատրել, թե ինչպես է պատահում, որ մուլտֆիլմը ավարտվում է, կամ որ մանկապարտեզը կարելի է ավարտել: Եվ միայն այնժամ, երբ անգիտակից կյանքը ճամպրուկներն հավաքած կհեռանա իր կյանքից, տեղը զիջելով հաստափոր ճամպրուկով գիտակից կյանքին, այդժամ էլ կհասկանա, որ մուլտֆիլմն ու մանկապարտեզը իրեն այցի էին եկել ճամպրուկային տրամադրությամբ: Օրինաչափ է այնքանով, որքանով որ տարվա

չորս եղանակների հերթափոխը, սառույց-ջուր-գոլորշի հերթափոխը: Եվ ի վերջո ըմբռնելի է, ինչպես այն ճշմարտությունը, որ մեր կորցրած ամեն

մի 24 ժամը այլևս հետ բերել չենք կարող, կամ որ աշխատանքի ընդունվելուց հետո մի օր դուրս ենք գալու այդ աշխատանքից: Բայց որոշ չափով էլ անհասկանալի, անբացատրելի ու անցանկալի է այս տրամադրությունը: Անբացատրելի, թե ինչու սպիացած վերքերի հետքերը չեն վերանում: Անհասկանալի՝ ինչպես կարելի է զգալ անշոշափելի, անտարածական ու անտեսանելի զգացմունքը՝ սերը, և ինչպես է, որ սիրո դրսևորումներից միայն մայրական սերը ճամպրուկային տրամադրություն չունի: Եվ այնքա՛ն-այնքա՛ն անցանկալի, անբացատրելի ու անհասկանալի է, որքան մահը, որքան այն հիշողությունը, որ մեծ ցանկության դեպքում չես կարողանում ջնջել, որքան չես կարող կանգնեցնել ծերության գալուստը դեպի կյանք: Ի վերջո, բոլորս աշխարհ ենք գալիս այդ տրամադրությամբ, մեկը փոքր ճամպրուկով, մեկը միջին, մեկը մի քանի, մյուսն էլ ագահի պես մի քանի ճամպրուկի հետ մի հատ էլ փոքր ձեռքի պայուսակ է հետը վերցնում:Եվ այո՜, բոլորս էլ կյանքի ճամպրուկային տրամադրության վասալներն ենք: Տվել է կյանքը մեզ մեր << ճիտին պարտքը>>՝ մեր հոգսերի, ուրախությունների , կարոտի ու սպասման ճամպրուկն ու ասել կրիր: Ու մենք ապրում ենք հենց այդ ճամպրուկային տրամադրությամբ ու վստահ, որ կյանքի պարգևած այդ ճամպրուկը երբեք չի դատարկվի: Ճամպրուկային տրամադրությունը փիլիսոփայակա՞ն է, աքսիոմա՞ է. չեմ կարող ասել: Կարևորն այն է, որ ես գտել, հայտնագործել եմ այն: Գիտեմ, այս կարգի լավ, պիտանի ու մշտագո հայտնագործությունների համար մրցանակ են տալիս, բայց այսօր չեմ ուզում. տրամադրություն չունեմ:

Հիշում եմ և պահանջում

Իմ հա՜յ ժողովուրդ, դու փոքր ես եղել, բայց մեծ է եղել քո ցավը: Քո դարավոր կյանքում դու տեսել ես ավեր ու կրակ, արյուն ու արցունք, կռիվ ու մահ: Բայց այն մեկն ուրիշ էր, այն մեկն աններելի էր, այն մեկը՝ 1915թ. մահաբեր ապրիլը…

Ես չեմ տեսել դեպքերն այն ահարկու, չեմ տեսել անապատը ծածկող ցնցոտիածածկ մարդկանց շարքերը, չեմ լսել մեկուկես միլիոն մարդու հեծկլտոցն ու հառաչը, մրմունջն ու աղոթքը, բայց այդ հիշողությունները ժառանգել եմ իմ պապերից, այդ հիշողությունները իմ արյան ու իմ երակների մեջ են , իմ աչքերում…

Ո՞վ բարբարոս թուրք, ո՞վ տվեց թուրը նմանիդ ձեռքին, ո՞վ քեզ տվեց իրավունք խլելու մեկուկես միլիոն մարդու կյանքն ու կայքը, հողն ու հավատը: Քո թեթև ձեռքով իմ երկիր դրախտավայրը դժոխք դարձավ, իրական դժոխք, որից անգամ սահմռկեց դժոխքի տիրակալը:Դու գողացար մեզանից ոչ միայն մեր հողը,այլ մեր ժպիտը, մեր աչքերի փայլը,մեր՝ լիաթոք ուրախանալու կարողությունը:Հորովելը սառեց աշխատասեր գյուղացու բերանում,մայր բառը սառեց սիրառատ մանկան շուրթերին:

… Ու հիմա վրեժ է տենչում արյունով ներկված հողիս ամեն մի մասնիկը,ամեն հայի աչքում սառել է հատուցման պահանջը:

Այո՜,ես էլ եմ հատուցում պահանջում,պահանջում եմ վերադարձնել հայի կորցրած ժպիտը,հայի հողը,հայի աչքերի փայլը:Պահանջում եմ վերադարձնել միլիոնավոր մարդկանց երազներն ու իղձերը,պահանջում եմ ծնկաչոք ներում հայցել իմ <<մորթված>> ազգից,պահանջում եմ , որ ընդունես քո կատարած ոճրագործությունը,թու՜ք բարբարոս:

Պահանջում եմ ու հավատում, որ դեռ գալու է վրեժի ու հատուցման ժամանակը,հավատում եմ, որ Դեր Զորի անապատների անթաղ դիակները գտնելու են իրենց հանգիստը,հավատում եմ, որ բարբարոսը պատասխան է տալու:

Կգա այդ օրը,լսու՞մ եք, զոհե՜ր…Ննջեցե՜ք խաղաղությամբ…Ձեր երազները իջնելու են երկնքից…

Քանի կամ ու շնչում եմ, հիշելու եմ:

Քանի հիշում եմ, պահանջելու եմ:

Բայց և՝ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ:

Մենք հաղթանակի սերունդն ենք

Ծաղիկները ձեռքիս կանգնած եմ մեծ պապիս շիրիմի առջև: Լռություն է իջել շուրջս, մի խոսուն լռություն…

Շիրմաքարից ինձ են նայում պապիս բարի , իմաստուն աչքերը: Որքան ցավ, որքան տրտմություն, որքան համբերություն և հուշեր կան նրա անթափանց հայացքում: Նրա անկենդան հայացքի մեջ հպարտություն է թաքնված: Դա Հայրենական մեջ պատերազմում

հաղթանակը կերտած զինվորի հպարտ հայացքն է: Չէ՞ որ դու զինվոր ես եղել, հաղթանակի զինվոր, ռազմի դաշտում, ահեղ մարտերում հայրենիքի համար պայքարած զինվոր ես եղել: Դու քո ուսերին ես կրել պատերազմի արհավիրքները:Որքան կուզեի լսել քո ապրած օրերի պատմությունը, պապ: Կուզեի սրբել արցունքը քո աչքերի, ամոքել քո սրտի վերքը: Որքան չպատմած հուշեր տարար քեզ հետ, որքան ցավեր՝ ծնված պատերազմում:

… Պատմիր , շիրմաքար, դու խոսիր պապիս քաղցր ու սրտից եկող ձայնով: Լուռ է շիրիմը, բայց խոսուն են պապիս աչքերը: Այդ աչքերի ծովում ահա տեսնում եմ նրանց՝ հաղթանակի զինվորներին: Կարծես հիմա էլ սարսռում է հողը ոտքերիս տակ նրանց խրոխտ քոչարիից. Ես այդ պարն եմ տեսնում պապիս աչքերում, ես էլ եմ պարում…հաղթանակի պարը…

Եզրակացություն

Այսպիսով, աշակերտի մոտ շարադրություն գրելու մոտիվացիա կառաջանա, գրելը աշակերտի համար կդառնա հետաքրքիր և ցանկալի, եթե նա հասկանա , որ դա այնքան էլ բարդ աշխատանք չի , և ինքը դա կարող է անել, որ յուրաքանչյուրի մեջ էլ ապրում է ստեղծագործողը: Նա պիտի հասկանա, որ ոչինչ հեշտ չի տրվում, որ ամեն ինչ ձեռք է բերվում կամքի, համառության, աշխատանքի արդյունքում, պիտի հանգի այն գաղափարին, որ լավ շարադրությունը միայն ճոխ բառերի շարան չէ, այլ հույզ, ապրում, անկեղծություն ու պարզություն: Իսկ դա մեծապես կախված է ուսուցչի վարպետությունից, նրա՝ անընդհատ ստեղծագործելու և շարադրություն անցկացնելու նոր մեթոդներ գտնելու ձիրքից : Ճիշտ է,շարադրություն գրողը ինքը պետք է օժտված լինի ստեղծագործական կարողություններով, բայց ուսուցչի աշխատանքը ևս տալիս է ցանկալի արդյունք:Ուսուցիչը պիտի խրախուսի աշակերտների առաջին փորձերը, առաջին հայացքից ոչինչ չասող շարադրանքի մեջ պիտի գտնի սերմի հատիկը, որը հետո պտուղ կտա, պիտի աշակերտին սովորեցնի « փոքրիկ քայլերի արվեստը», ձեռքը բռնած պիտի տանի երևակայության ու հեքիաթի աշխարհ: Նպատակին հասնելու համար ուսուցիչը աշակերտի մեջ պիտի սերմանի հետևյալ գաղափարները.

1.Իսկական ոգեշնչումը ձեռք է բերվում գրելու միջոցով:
Գրի՛ր: Գրելու հենց միայն ֆիզիկական գործընթացն արդեն ազատություն կտա երևակայությանդ: Այս առումով գրելը պարելու նման է, երբ նրբագեղությունն առաջ է գալիս շարժումների հետ:
Գոնե սկզբնական շրջանում գրելը հեշտ է: Բառը բառի հետևից հոսում է... Ոգեշնչումը սովորաբար գալիս է նախադասության կեսից: Մուսադ կերգի, բայց միայն որպես հոսող թանաքի ուղեկից:

2. Սիրածդ գրողի գիրքը բաց վիճակում թող միշտ կողքիդ լինի ստեղծագործելիս՝ ոգեշնչման նպատակով: Մի վախեցիր այս գործում ինքդ քեզ կորցնելուց: Անկախ նրանից, թե մեկ ուրիշի արվեստը որքանով ազդեցիկ կլինի, քո անհատականությունը չի տուժի: Քո ձայնը կխառնվի այլոց ձայնին ու հետագայում ավելի հստակ կդառնա նրանց միջոցով: Բայց դու միշտ էլ կմնաս դու:

3.Սիրածդ գրականության հավաքածուն կազմիր:
Մի նոթատետր վերցրու, և մեջը քեզ դուր եկած գրքերից հետաքրքիր գրված հատվածներ, հաջող մտքեր գրիր: Դրանք կոգեշնչեն քեզ գրելու:

4.Սնվիր բառերով:

Մի լավ բացատրական բառարան ձարիր՝ հնարավորինս մեծ: Ապա հարմար գրքակալ պատրաստիր կամ գնիր, որն ամբողջ ժամանակ բառարանը բաց վիճակում կպահի: Այս գանձը դիր գրասեղանիդ վրա և հաճախ կարդա:

5. Տիրապետիր փոխաբերությանը: Բայց մի՞չարաշահիր այն:

Նորություն չէ, որ փոխաբերությունը ոճական կարևորագույն հնարներից է, որ զարդարում ու հարստացնում է լեզուն, համ ու հոտ տալիս խոսքին: Բայց այն կիրառելն էլ համապատասխան հմտություն է պահանջում: Խուսափիր սարքովի քնարական զարդարանքերից ու էժանագին, մակերեսային փոխաբերություններից: Բավական է գեղեցկացնելու նպատակով ավելորդ պաճուճազարդես խոսքդ, ու լրիվ հակառակ արդյունքի կհասնես:

6.Խուսափիր շաբլոն դարձվածքներից ու ծեծված արտահայտություններից:

Նման արտահայտություններն արդեն այնքան են «մաշվել», որ գրեթե կորցրել են իրենց ուժը: Եթե ընթերցողը կարողանա կանխատեսել, թե ինչպես է ավարտվելու գրածդ արտահայտությունը, ուրեմն համարիր, որ կորած ես:

7. Ուշադրություն դարձրու շարադրանքիդ: Խնամքով վերաբերվիր բառերիդ ընտրությանը: Մեկ բառն էլ, ինչպես յոդի կաթիլը ջրով լի բաժակի մեջ, կարող է փոխել ամբողջ գրվածքիդ գույնը:

8. Հակիրճ գրիր, հստակ գրիր: Հիշիր, որ ոչ թե տիեզերանավ ես կառուցում, այլ շարադրանք ես գրում:

9.Սովորիր անհաջողություն կրել: Կրակիր: Գուցե վրիպես, բայց ձախողումն ավելի լավ ուսուցիչ է, քան հաջողությունը: Հաջողության ճանապարհը միշտ էլ ձախողումների միջով է լինում: Բազմաթիվ սևագրեր արա:

10.Հավատա ինքդ քեզ, նույնիսկ եթե ուրիշ ոչ ոք չի հավատում:

Պետք է հիշել, որ բոլոր գործերում հմտանում են շատ աշխատելով, ուստի շարադրություն գրելու մեջ էլ հմտանում են դրանք գրելով, այսինքն՝ ստեղծագործական ձիրքը զարգացնելով: [2]

[2] Սթիվեն Թեյլոր Գոլդսբերի՝Գրողի իմաստության գիրք. Գրելու արհեստին տիրապետելու 101 կանոն՝

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Եզեկյան,Ռ. Սաքապետոյան «Հայոց լեզու -12» Երևան -2011
2. Գայանե Օհանյան «Ստեղծագործական շարադրությունների ժողովածու» Երևան-2005
3. «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր 3. 2015
4. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց Երևան-2007
5. Սթիվեն Թեյլոր Գոլդսբերի «Գրողի իմաստության գիրք. Գրելու արհեստին տիրապետելու 101 կանոն»